ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

Բ. Բ. ՊԻՈՏՐՈՎՍԿԻ

(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

1968 թ. փետրվարի 14-ին գիտական հասարակայնությունը նշեց հայտնի պատմաբան, հնագետ և արևելագետ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, աշխարհի խոշորագույն թանգարաններից մեկի՝ Պետական էրմիտաժի դիրեկտոր, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ Բորիս Բորիսովիչ Պիոտրովսկու ծննդյան 60-ամյակը։ Բազմաթիվ աչքի ընկնող գիտական աշխատությունների, ինչպես նաև եռանդուն հասարակական գործունեության շնորհիվ Բորիս Պիոտրովսկու անունը լայնորեն հայտնի է մեր երկրում և արտասահմանում։ Այդ ընդհանուր ճանաչմանը մեծ չափով նպաստում են Բորիս Բորիսովիչի անձնական հատկությունները՝ նա հմայիչ է, մեղմ շրջապատի մարդկանց հանդեպ, համեստ է և արտակարգ պահանջկոտ՝ իր նկատմամբ։

Բ. Բ. Պիոտրովսկին ծնվել է 1908 թ. Պետերբուրգում։ Հայրը մաթեմատիկայի ուսուցիչ էր ռազմա-ուսումնական հաստատություններում, մայրը՝ մանկավարժ միջնակարգ դպրոցում։ Ապագա գիտնականի սերը դեպի հումանիտար գիտությունները երևան եկավ դեռևս դպրոցում, որն ավարտելուց հետո, 1925 թ. նա ընդունվում է Լենինգրադի համալսարանի լեզվաբանության և նյութական մշակույթի ֆակուլտետը։

Պատմական դիսցիպլինների լայն ընդգրկումը, սերտ շփումը անվանի արևելագետների հետ ամուր հիմք ստեղծեցին ընդունակ ուսանողի հետագա դիտական աճի համար։ Ակադեմիկոս Վ. Վ. Ստրուվեի մոտ Բորիս Պիոտրովսկին մեծ հափշտակությամբ պարապում է եգիպտաբանությամբ և Հին Արևելքի պատմությամբ, ուսումնասիրում է Եգիպտոսի և Առաջավոր Ասիայի նյութական մշակույթի պատմությունը պրոֆ. Ն. Դ. Ֆլիտների և Կովկասի հնագիտությունը՝ պրոֆ. Ա. Ա. Միլլերի ղեկավարությամբ։ Համալսարանում սովորելու տարիներին նա կատարում է իր առաջին հնագիտական արշավները։

Պիոտրովսկու հետագա ճակատագիրը կապված է Լենինգրադի երկու խոշոր հիմնարկների՝ Պետական էրմիտաժի և Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայի (ներկայումս՝ ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտ) հետ։ Ահա արդեն քառասուն տարի է, ինչ Բ. Պիոտրովսկին այստեղից ձեռնարկում է իր



ամենամյա բազմաթիվ գիտարշավները դեպի Հայաստան, Վրաստան (1935), Վոլգա-Դոն (1934), Թաման (1931), Հյուսիսային Կովկաս (1933, 1936), Միջին Ասիա (1936—1937) և հեռավոր Եգիպտոս (1961—1963)։

Սքանչելի համալսարանական կրթությունը, իսկ հետագայում՝ աշխատանքը էրմիտաժում և Նյութական մշակույթի ակադեմիայում այնպիսի խոշոր գիտնականների հետ, ինչպիսիք էին Ն. Յա. Մառը, Ի. Ի. Մեշչանինովը և Հ. Ա. Օրբելին, որի աշակերտը և մտերիմ ու նվիրված բարեկամն էր Բորիս Բորիսովիչը երկար տարիների ընթացքում, վերջնականապես որոշեցին նրա գիտական հետաքրքրությունների հիմնական ուղղությունը։ Նա ընտրում է Կովկասը՝ մի երկրամաս, որը հնագույն ժամանակներում առավել սերտորեն էր կապված առաջավորասիական քաղաքակիրթ աշխարհի հետ։ Այստեղ նրան առանձնապես գրավում էր մեր հայրենիքի տերիտորիայում ստեղծված հնագույն պետական կազմավորումը՝ Ուրարտուն։

Այդ պահից, այն է՝ 30-ական թթ. սկզբից, Բորիս Պիոտրովսկին իր բախտը հաստատապես կապում է Հայաստանի հետ։ Նախաուրարտական և ուրարտական շրջանի կիկլոպյան ամրոցների, վիշապների հետազոտություններ (Լ. Գյուզալյանի և Ա. Հաջյանի հետ համատեղ), մասնակցություններ Հ. Ա. Օրբելու արշավախմբերին, որը հետազոտում էր Անբերդի հոյակապ կոմպլեքսը, Անդրկովկասի թանգարաններում կատարած աշխատանքը օրգանապես մոտեցրին Պիոտրովսկուն նրա հիմնական պեղումների՝ «ողջ կյանքի» պեղումների գլխավոր օբյեկտի ընտրությանը։ Այդ օբյեկտը դարձավ Կարմիր բլուրը, որի վրա հնում կանգնած էր ուրարտական Թեյշեբաինի ամրոցը։

Արդեն 30 տարի է, ամեն ամառ Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ Կարմիր բլուրում աշխատում է կոմպլեքսային հնագիտական արշավախումբ, որը մեծ դեր է կատարում Հայաստանի դիտական կադրերի ձևավորման գործում։ Այդ արշավախմբի հետ են կապված հանրապետության պատմաբաններից ու հնագետներից շատերի անունները։

Կարմիր բլուրը եզակի հուշարձան է, որով առաջին անգամ հին արևելյան տիպի քաղաքակրթություն հայտնաբերվեց մեր երկրի տերիտորիայում։ Իրենց մեթոդիկայով փայլուն պեղումները հնարավորություն տվեցին լրիվ բացելու հուշարձանը, որը հնագիտական պրակտիկայում չափազանց հազվադեպ երևույթ է։ Այստեղ հայտնաբերվեցին նյութական մշակույթի խիստ արժեքավոր առարկաներ, գրավոր վավերագրեր, որոնք Հայաստանի պատմական թանգարանի, Էրմիտաժի զարդն են և ուրարտագիտության ամրողջ բաժիններ են կազմում։

Արևելքի հնագույն մշակույթների պատմության ասպարեզում ունեցած բարձր պատրաստականությունը, ինչպես նաև հնագիտական նյութի փայլուն տիրապետումը Բ. Պիոտրովսկուն հնարավորություն տվեցին պեղումների առաջին իսկ օրվանից լայնորեն հրապարակել դրանց արդյունքները։ Սկսած 1939 թ., երբ լույս է տեսնում ուրարտագիտությանը նվիրված նրա առաջին գիրքը՝ «Ուրարտու. Անդրկովկասի հնագույն պետությունը», մամուլում երևան է գալիս պեղումների աշխատանքների վերաբերյալ հոդվածների ու հաշվետվությունների մի ամբողջ շարք (Կարմիր բլուր I—IV, Երևան, 1950—1960)։ Դրանցից շատերը թարգմանվել են եվրոպական լեզուներով և արտատպվել արտասահմանի տարբեր դիտական հրատարակություններում։ Այս ամենի հետևանքով Կարմիր բլուրը դարձավ նույնքան հայտնի, որքան համաշխարհային մշակույթի այնպիսի հուշարձանները, ինչպիսիք են Պերսեպոլիսն ու Խարապպան, Շոշն ու Ալաչա-Էյուկը։

Սակայն ամենանշանակալի երևույթը դա Բ. Պիոտրովսկու «Ուրարտուի պատմությունն ու մշակույթը» գիրքն էր, որը 1944 թ. հրատարակվեց, ապա նաև հաջողությամբ պաշտպանվեց որպես դոկտորական դիսերտացիա Երևանում, ուր տեղափոխվել էր հեղինակը լենինգրադյան բլոկադայի ծանր օրերից հետո։ Այդ գիրքը դրվում էր պաշարված քաղաքում, Էրմիտաժի ռմբապաստարաններում, օդային հարձակումների միջև ընկած դադարների ժամանակ, երբ Բ. Պիոտրովսկին, որը հրշեջ պաշտպանության պետի տեղակալն էր, ստիպված էր լինում տանիքի վրա հանգցնել գերմանական հրձիգ ռումբերը։ Այդ գրքում լրիվ չափով բացահայտվեցին Պիոտրովսկու գիտական ոճի բնորոշ գծերը, մի ոճի, որը զուգակցում է իր մեջ նյութական մշակույթի հուշարձանների փայլուն իմացությունը՝ պատմական լայն ընդհանրացումների, ուսումնասիրվող հասարակության կյանքի ու արտադրության պայմանների հիմնավորված վերապատկերման, համաշխարհային պատմական պրոցեսում այդ հասարակության գրաված տեղը որոշելու ձգտման հետ։ Պատահական չէ, որ «Ուրարտուի պատմությունն ու մշակույթը» գիրքը 1946 թ. արժանացավ պետական մրցանակի։ Զգալիորեն վերամշակված և նոր նյութերով առատորեն լրացված, այս դիրքը 1959 թ. վերահրատարակվեց «Վանի թագավորությունը» վերնագրով։ Իսկ երեք տարի անց Բ. Պիոտրովսկին հրապարակեց ևս մի աշխատություն՝ նվիրված Վանի թագավորության վաղ և ինքնատիպ արվեստին՝ «Ուրարտուի արվեստը» (1962)։ Առաջինը 1966 թ. իտալերեն թարգմանությամբ լույս տեսավ Հռոմում, իսկ երկրորդը՝ 1967 թ. անգլերեն Լոնդոնում։

Այսպիսով, ուրարտագիտության բնագավառում Բ. Պիոտրովսկու կատարած պեղումների և հետազոտությունների շնորհիվ, Հայաստանի տերիտորիայում հայտնաբերված միանգամայն նոր ուրարտական քաղաքակրթությունը, որը հնագույն ժամանակներում մրցում էր աշխարհի մեծագույն մշակույթների հետ, դարձավ համաշխարհային գիտության սեփականությունը։ Պատմության բոլոր դասագրքերում այժմ երևան է եկել նոր բաժին՝ նվիրված Ուրարտու պետության պատմությանը։ Եվ վերջապես, Պիոտրովսկու կողմից հայտնաբերված և ի մի բերված հնագիտական և վիմագրական նյութերը, որոնք վերաբերում են մ. թ. ա. I հազարամյակի առաջին դարերին, բացահայտեցին այն հնագույն կուլտուր-պատմական ենթաշերտը, որի հիմքի վրա ձևավորվեց հայ ժո-

զովուրդը, հայ պետականությունը։ Այդ հարցին Բ. Պիոտրովսկին առանձնահատուկ ուշադրություն է նվիրել իր «Հայ ժողովրդի կազմավորման հարցի շուրջը» (1944, 1945) և «Հայ ժողովրդի կազմավորման մասին» (1946) աշխատություններում։

Ուրարտագիտությունն, անշուշտ, Բ. Պիոտրովսկու գիտական ստեղծագործության գլխավոր, առաջատար ուղղությունն է։ Սակայն նրա հետաքրքրությունները զգալիորեն դուրս են եկել գիտության այս բնագավառի շրջանակներից։ Տարիներ ի վեր անվանի գիտնականը աշխատանք է տանում Կովկասի հնագիտության ավելի վաղ, նախաուրարտական ժամանակաշրջանների ուսումնասիրման գծով։ Իր «Անդրկովկասի հնագիտությունը» գրքում (դասախոսություններ, 1949) նա ընդհանրացրել է Հարավային Կովկասի հնագիտական հետազոտման բոլոր խոշոր նվաճումները, ուրվագծել տեղական ցեղերի հնագույն պատմության զարգացման հիմնական փուլերը և նրանց փոխադարձ կապը շրջապատի քաղաքակիրթ աշխարհի հետ։ Այս գրքում առավել ցայտուն երևան են հանդես եկել պատմական պրոցեսի օրինաչափությունները բացահայտելու հեղինակի հմտությունը, նրա գիտական մտածողության տեսական կերտվածքը։ Այդ նույն հատկությունները զգալի չափով արտացոլվել են նաև նրա «Երկրագործության հիմնական փուլերը Հայաստանում» (1961) և «Անասնապահության զարգացումը հնագույն Անդրկովկասում» (1955) հոդվածներում, որոնցում Բ. Պիոտրովսկին առաջ քաշեց և բազմակողմանիորեն հիմնավորեց այն թեզը, որ Կովկասի լեռնային ռելիեֆի պայմաններում բրոնզի դարաշրջանում մեծանում էր անասնապահության, որպես ամենաշատ հավելյալ պրոդուկտ տվող ճյուղի դերը։

Բ. Պիոտրովսկին նոր խոսք ասաց նաև ըստկյութական վաշկատունների և Հարավային Կովկասի ու Առաջավոր Ասիայի ցեղերի փոխադարձ կապերի բարդ խնդրի ասպարեզում։ Այդ թեմային են նվիրված նրա «Սկյութները և Անդրկովկասը» (1940), «Սկյութները Անդրկովկասում» (1949), «Սկյութները և Հին Արևելքը» (1954) աշխատությունները։

Զբաղվելով հանդերձ Կովկասի մշակույթների խնդիրներով, Պիոտրովսկին երբեք չկտրվեց եգիպտաբանությունից, որը նրա «առաջին գիտական նախասիրությունն» էր։ Եգիպտական հուշարձաններին և նրանց իմաստաբանությանն են նվիրված նրա վաղ շրջանի մի շարք աշխատությունները, որոնցից առաջինը՝ «Հին եգիպտական «երկաթ» տերմինի մասին», գրված է դեռևս ուսանողական տարիներին (1929)։ Հետագայում նրան խիստ գրավում են Նեզոսի հովտի հնագույն մշակույթի ոչախի հետ մեր հայրենիքի վաղեմի ցեղերի ունեցած կապերը։ Այս հետաքրքրություններն են արտացոլված գիտնականի այն աշխատության մեջ, որը նվիրված է ՍՍՀՄ տերիտորիայում հայտնաբերված հին եգիպտական առարկաներին (1953)։

Վերջերս Բորիս Բորիսովիչին բախտ վիճակվեց լինել Եգիպտոսում, որտեղ նա սկզբում մասնակցում էր ՅՈՒՆԵՍԿՈ-յի էքսպերտների կոնսուլտատիվ խորհրդի աշխատանքներին (1960), իսկ ավելի ուշ՝ զեկավարում Արաբական Միացյալ Հանրապետությունում, Առուտնի ջրամբարտակի գոտում աշխատող ռուսական առաջին հնագիտական արշավախումբը (1961—1963)։ Գիտարշավի արդյունքները իրենց արտացոլումը գտան «Հնագույն Նուբիան» գրքում, որը հրապարակ եկավ պեղումներն ավարտվելուց քիչ անց։ Այս աշխատանքների ակնառու նշանակությունը դժվար է գերագնահատել։ Պեղումների շնորհիվ հայտնաբերվեց մեծ քանակությամբ նոր և բազմազան նյութ՝ ոկոած պալեոլիթից և վերջացրած միջնադարով։ Գտնվեցին մի շարք նոր հիերոգլիֆ արձանագրություններ։ Այս ամենը Բ. Պիոտրովսկուն հնարավորություն տվեց խիստ կարևոր պատմական եզրակացություններ անել Նեղոսի հովտում դասակարգային հասարակության ձևավորման մասին և գտնել նախկինում հայտնած իր այն տեսակետի հաստատումը, որ հին Եգիպտոսի զարգացման սոցիալ-տնտեսական պրոցեսներում անասնապահությունը նշանակալի գեր է կատարել։

Բորիս Պիոտրովսկին ավելի քան 150 գիտական աշխատությունների հեղինակ է և հասկանալի է, որ մեկ հոդվածի սահմաններում չափազանց դժվար է ընդգրկել հարցերի այն լայն շրջանը, որ գրավում է գիտնականի ուշադրությունը։ Մենք կանգ առանք լոկ նրա հիմնական գիտական հետաքրքրությունների վրա։

Սակայն լայն ճանաչումը, որ վայելում է Պիոտրովսկին, սոսկ գիտական գործունեության արդյունք չէ։ Աշխատելով Էրմիտաժում, Բորիս Բորիսովիչը իր կյանքի կեսից ավելին նվիրել է թանգարանային գործին և ի հայտ բերել իր կազմակերպչական սքանչելի ունակությունները։ Պատերազմի սկզբում, կազմակերպչորեն օժանդակելով թանգարանի անգնահատելի ցուցանմուշները թիկունք փոխադրելու գործին, Բորիս Բորիսովիչը Էրմիտաժի դիրեկտոր Հ. Ա. Օրբելու հետ միասին մնաց պաշարված Լենինգրադում և շարունակում էր զբաղվել ստեղծագործական աշխատանքով, դասախոսություններ էր կարդում զինվորների և քաղաքացիական բնակչության համար, մասնակցում էրմիտաժի հակահրշեջային պաշտպանությանը։

Բ. Պիոտրովսկուն միշտ էլ գրավել է աշխատանքը երիտասարդության հետ։ Մի շարք տարիների ընթացքում Լենինգրադի համալսարանի պատմության և արևելագիտության ֆակուլտետներում նա հատուկ կուրս է կարդացել Անդրկովկասի և Հին Արևելքի հնագիտության վերաբերյալ։

Վարչական բարձր պաշտոններում գտնվելով, Բորիս Բորիսովիչը մշտապես և համառորեն նպաստում է Կովկասի և Լենինգրադի հնագետների միջև մշտական կապերի իրականացմանը։ Վերջին տարիներս զգալիորեն ընդլայնվել են կապերը նաև արտասահմանի հնագետների հետ։ Լինելով համաշխարհային հռչակ ունեցող գիտնական, նա մշտապես ներկայացնում է մեր երկիրը միջազգային համաժողովներում՝ Հռոմում (1955), Մյունխենում (1957), Լոնդոնում (1963—1966), Նյու-Դելիում (1964), Նյու-Յորքում (1965)։ Նա թանգարանների միջազգային կոմիտեի անդամ է, Դելիի համալսարանի պատվավոր դոկտոր, Բրիտանական ակադեմիայի թղթակից-անդամ, Գերմանական հնագիտական ընկերության թղթակից-անդամ, Պրագայի Կարլովյան և Կահիրեի համալսարանների Եգիպտարանական ինստիտուտի պատվավոր անդամ, Ֆլորենցիայի Նախապատմության ընկերության պատվավոր անդամ։ Օրերս նա ընտրվեց նաև Բավարական ակադեմիայի պատվավոր անդամ։ Նրա՝ կոմունիստ-հայրենասերի եռանդուն հասարակական գործունեությունն իր վառ գործադրումը գտավ աշխատավորների դեպուտատների Լենինգրադի սովետում, Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության համառուսաստանյան ընկերությունում, «ՍՍՀՄ—ԱՄՆ», «ՍՍՀՄ—Ֆինլանդիա» և «ՍՍՀՄ—Իտալիա» ընկերություններում։ Բ. Բ. Պիոտրովսկին պարգևատրվել է Լենինի, երեք Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով և մի քանի մեդալներով։

Հայ ժողովուրդը բարձր է գնահատում այդ անխոնջ գիտնականին, որի բազմամյա հետազոտությունների շնորհիվ բացահայտվեցին հայ հինավուրց երկրի հազարամյա պատմության շատ էջերը։

Կ. ՔՈՒՇՆԱՐՅՈՎԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Հայաստանի գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու համար 1968 թ. մարտի 26-ին ակադեմիայի նիստերի դահլիճ էին եկել ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ, գիտահետազոտական հիմնարկների ղեկավարներ և բաժինների վարիչներ, արդյունաբերության և մշակույթի տարբեր բնագավառի ներկայացուցիչներ։ Տարեկան ժողովի աշխատանքներին մասնակցում էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ա. Ե. Քոչինյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ ընկ. Բ. Հ. Մուրադյանը, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկ. Ն. Խ. Հարությունյանը, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար ընկ. Ռ. Հ. Խաչատրյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ ընկ. Լ. Ա. Ստեփանյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար ընկ. Լ. Պ. Ղարիբջանյանը։

Ընդհանուր ժողովը ներածական ճառով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Խոսելով սովետական գիտության նվաճած նոր բնագծերի մասին, նա կանգ առավ այն առաջընթացի վրա, որ գիտության բնագավառում ձեռք է բերել հայ ժողովուրդը 1967 թ. ընթացքում, ընդգծեց կուսակցության և ժողովրդի անդուլ հոգատարությունը հայրենական գիտության նկատմամբ։

Հայաստանի գիտնականների աշխատանքը բարձր գնահատվեց ժողովրդի, կուսակցության, կառավարության կողմից։ Բյուրականի աստղադիտարանը արժանացավ ՍՍՀՄ բարձրագույն պարգևի՝ Լենինի շքանշանի, հանրապետության գիտությունների ակադեմիան պարգևատրվեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, ՀՍՍՀ Մինիստրների սովետի, Գերագույն սովետի նախագահության և ՀԱՄԽ-ի հուշադրոշով։

Տարեկան ժողովը քննարկեց ակադեմիայի 1967 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները։ Հարցի քննարկմանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Ս. Դավթյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը, Ա. Բ. Նալբանդյանը, Ա. Ս. Ղարիբյանը, Ս. Տ. Երեմյանը, Ա. Ա. Առաքելյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Պ. Աղայանը, պատմության ինստիտուտի դիրեկտոր Գ. Ա. Գալոյանը, պատմական գիտությունների դոկտոր Ա. Ն. Մնացականյանը, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրի տեղակալ Ա. Պ. Սիմոնյանը։

Ակադեմիայի տարեկան հաշվետվությունից պարզվեց, որ 1967 թ. ընթացքում ակադեմիայի